ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝

Իրավունքի Ինստիտուտի տնօրեն

Մ. Ա. Քալաշյան.

«04» հուլիսի 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի

Ամբիոն՝ քրեական իրավունքի և քրեական դատավարության

Հեղինակ՝ ի.գ.թ., դոցենտ, Հովհաննիսյան Ա. Ռ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ «Հանցավորության կանխարգելում. միջազգային իրավական ասպեկտը և ազգային մոդելները»

Մագիստրոս կրթական ծրագիր (հեռակա)՝ 042101.04.7

«քրեական իրավունք և դատավարություն»

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.7

Ծրագիրը կազմվել է համապատասխանությամբ ՌԴ բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական ստանդարտների պահանջների, Ռուսաստանի և Հայաստանի գործող օրենսդրության հիման վրա և նախատեսված է մագիստրոսական ծրագրով սովորող իրավաբանական ֆակուլտետի ուսանողների համար:

Անոտացիա

Ժամանակակից իրավական պետությունում քրեական քաղաքականության հիմնական ուղղություններից մեկն է ոճրագործությունների կանխարգելումը: Արդյունավետ կանխարգելումը ենթադրում է ընդհանուր և հատուկ միջոցառումների ներդաշնակ կիրառում, ինչպես նաև համապատասխան օրենսդրական բազա թե՛ ազգային, թե՛ միջազգային մակարդակով:

Կանխարգելման միջոցառումների համակարգն ու մեխանիզմը պահանջում են անընդհատ կատարելագործում՝ կախված հասարակությունում տիրող սոցիալ-քաղաքական, տնտեսական, գաղափարական պայմաններից, որոնք պահանջում են համարժեք քրեական-իրավական և քրիմինոլոգիական արձագանք:

Ոճրագործությունների կանխարգելումը որպես քրեական քաղաքականության նպատակ և ուղղություն ենթադրում է ազդեցություն հասարակական այն երևույթների վրա, որոնք պայմանավորում են հանցավորությունը: Արդյունավետ կանխարգելումը պետք է իրականացվի ինչպես պրեվենտիվ, այնպես էլ քրեական-իրավական միջոցների համակցված կիրառմամբ:

Ուսումնական ծրագրի կառուցվածքը ներառում է հիմնական տեսական և գործնական կողմերը՝ հիմնված միջազգային փորձի, քրիմինոլոգիական ուսումնասիրությունների, Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ՄԱԿ-ի և այլ կազմակերպությունների փաստաթղթերի վրա:

Դասընթացի նպատակը և խնդիրները Նպատակն է՝ իրավագիտության ոլորտում պրակտիկ գործունեություն ծավալող մասնագետների պատրաստում, որոնց մոտ ձևավորված կլինեն հմտություններ հանցավորության կանխարգելման ուղղությամբ:

Խնդիրներ՝

- Քրիմինոլոգիայի տեսական գիտելիքների ամրապնդում՝ կանխարգելման հարցերում;
- Քրեական քաղաքականության ուղղությունների ընկալում;

- Դատարանական պրակտիկայի ուսումնասիրում և դրա հիման վրա հանցագործի քրիմինոլոգիական բնութագրի կազմում;
- Արտասահմանյան փորձի և մոդելների վերլուծություն:

Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի օբյեկտն է՝ զանգվածային ոճրագործությունների, այդ թվում՝ ցեղասպանության, պատերազմական հանցագործությունների, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելման մեխանիզմների վերլուծությունը:

Դասընթացի առարկան է՝ միջազգային իրավունքի շրջանակում ոճրագործությունների կանխարգելման իրավական հիմքերը, միջազգային կազմակերպությունների դերակատարումը և առանձին երկրների ազգային կանխարգելման մոդելները:

Դասընթացի մուտքային պահանջները

Գիտելիքները՝

1. Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներ և աղբյուրներ;
2. Քրեական իրավունքի և միջազգային քրեական արդարադատության հիմունքներ;
3. ՄԱԿ-ի, Միջազգային քրեական դատարանի և տարածաշրջանային կառույցների գործունեություն:

Հմտությունները՝ **Գիտելիքի կիրառման հմտություններ՝**

1. Վերլուծել զանգվածային ոճրագործությունների իրավական որակումը;
2. Համադրել միջազգային և ազգային իրավական գործիքները:

Ընդհանրական իմացական հմտություններ՝

1. Տիրապետել իրավաբանական փաստարկման և եզրահանգման կարողություններին;
2. Աշխատել իրավական աղբյուրների և միջազգային փաստաթղթերի հետ:

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝ Ինքնուրույնություն և պատասխանատվություն՝

1. Կրիտիկորեն մոտենալ իրավական խնդիրներին;
2. Ձևակերպել և պաշտպանել սեփական իրավական դիրքորոշումը:

Դասավանդման եղանակները և մեթոդները

- Տեսական դասախոսություններ՝ հիմնարար հարցերի մեկնաբանությամբ;
- Սեմինարներ՝ քննարկումներ ու դեպքերի (case study) վերլուծությամբ;
- Խմբային նախագծեր՝ ազգային մոդելների համեմատական վերլուծությամբ;
- Իրավական փաստաթղթերի և նախադեպերի հետ աշխատանք;
- Ինքնուրույն հետազոտություններ և դրանց ներկայացում:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «**քրեական իրավունք և դատավարություն**»՝ .. ակադեմիական կրեդիտ (144 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 10 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար:

Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 1-ին ուսումնական տարվա 1-ին կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	108
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	18
1.1.1. Դասախոսություններ	8
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	10
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	4
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	86
1.2.1. Քննություններին նախապատրաստում	

1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝(նշել)	
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	ստուգարք

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար պարապմունքն եր**
1	**2=3+4**	**3**	**4**
Թեմա 1. Ոճրագործությունների կանխարգելման տեսական հիմքերը	**9**		**1**
Թեմա 2. Կանխարգելման տեսակները	**9**	**1**	**1**
Թեմա 3. Կանխարգելման օբյեկտներն ու սուբյեկտները	**9**	**1**	**1**
Թեմա 4. Գործունեության ապահովում. հիմնախնդիրներ և կատարելագործման ուղիներ	**9**	**1**	**1**
Թեմա 5. .Արտասահմանյան փորձ. ՄԱԿ-ի դերը	**9**	**1**	**1**
Թեմա 6. Քրեական-իրավական միջոցառումներ	**9**	**1**	**1**
Թեմա 7. Անչափահասների հանցավորության	**9**	**1**	**1**

կանխարգելում			
Թեմա 8. Մարդկանց վաճառքի կանխարգելում	**9**	**1**	**1**
Թեմա 9. Կանանց հանցավորության կանխարգելում	**9**	**1**	**1**
Թեմա 10 Պենիտենցիար հանցավորության կանխարգելում	**9**		**1**
Թեմա 11 Տարեցների հանցավորության կանխարգելում	**9**		
Թեմա 12 Կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելում կրթության և առողջապահության ոլորտներում	**9**		
Ընդամենը	**108**	**8**	**10**

Թեմատիկ պլան և բովանդակություն

Թեմա 1. Ոճրագործությունների կանխարգելման տեսական հիմքերը

- Կանխարգելման հասկացությունը և դրա համակարգը
- Հիմնական սկզբունքները՝ օրինականություն, նպատակաուղղվածություն, արդյունավետություն, հումանիզմ
- Իրավական ապահովում

Թեմա 2. Կանխարգելման տեսակները

- Ընդհանուր սոցիալական կանխարգելում
- Հատուկ քրիմինոլոգիական կանխարգելում
- Անհատական կանխարգելում
- Արտասահմանյան երկրների պրակտիկայից

Թեմա 3. Կանխարգելման օբյեկտներն ու սուբյեկտները

- Սուբյեկտների համակարգը և նրանց փոխգործակցությունը
- Իրավապահ մարմինների, հասարակական կառույցների դերակատարությունը

Թեմա 4. Գործունեության ապահովում. հիմնախնդիրներ և կատարելագործման ուղիներ

- Իրավական և կազմակերպչական հիմքեր
- Տեղական և միջազգային իրավական ակտեր
- Տեխնիկական և վերլուծական գործիքներ

Թեմա 5. Արտասահմանյան փորձ. ՄԱԿ-ի դերը

- Միջազգային համագործակցության տեսակներ՝ երկկողմ, տարածաշրջանային, գլոբալ
- Միջազգային կոնգրեսներ և նախաձեռնություններ

Թեմա 6. Քրեական-իրավական միջոցառումներ

- Խրախուսիչ նորմեր
- Պրոբացիա
- Կրկնահանցագործության կանխարգելում
- Դիվերսիֆիկացված պատժի համակարգ

Թեմա 7. Անչափահասների հանցավորության կանխարգելում

- Պատճառներ, պայմաններ, սոցիալական գործոններ
- Ընտանեկան միջավայրի դերը
- ՄԱԿ-ի փաստաթղթեր (Պեկինյան և Էր-Ռիադյան սկզբունքներ)

Թեմա 8. Մարդկանց վաճառքի կանխարգելում

- Միջազգային և ազգային իրավական փաստաթղթեր
- ՀՀ ազգային ծրագրեր
- Բժշկական հաստատությունների պատասխանատվությունը
- Ռեվիկտիմիզացիայի կանխում

Թեմա 9. Կանանց հանցավորության կանխարգելում

- Քրիմինոլոգիական բնութագիր
- Ընտանեկան բռնության կանխարգելում
- Ընտանեկան քրիմինոլոգիա
- Պատժի համակարգում կանանց առանձնահատկությունները

Թեմա 10. Պենիտենցիար հանցավորության կանխարգելում

- Քրիմինոգեն գործոններ և պայմաններ
- Աշխատանքի կազմակերպում և դաստիարակչական աշխատանք
- Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ
- Տեխնիկական համալրվածություն և միջազգային փորձ

Թեմա 11. Տարեցների հանցավորության կանխարգելում

- Սոցիալական և հոգեբանական գործոններ
- Ռեսոցիալիզացիա և աջակցություն
- Պատժի կիրառման առանձնահատկություններ
- Սոցիալական ծրագրերի անհրաժեշտություն

Թեմա 12. Կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելում կրթության և առողջապահության ոլորտներում

- Սուբյեկտների խնդիրներ և առանձնահատկություններ
- Քրիմինոլոգիական նկարագիր
- Պետական վերահսկողություն և օրինականությունը

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

1. ՄԱԿ-ի Ցեղասպանության կանխարգելման և պատժի մասին կոնվենցիա (1948)
2. Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրություն (1998)
3. Ալեքսանդր Գան, «Միջազգային քրեական իրավունքը և արդարադատությունը», Երևան, 2021
4. W. Schabas, "Genocide in International Law", Cambridge University Press
5. Միջազգային քրեական դատարանի դեպքերի ժողովածու և վերլուծություն